# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԸ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ուսումնական տարվա վերաբացման առիթով ողջունում ենք ձեզ, սիրելի դպրոցականներ, ուսանողներ, մանկավարժներ, կրթության գործի բոլոր նվիրյալներ, և հղում ենք ձեզ Հայրապետական Մեր օրհնությունը:

Բարիք է ուսումը, գիտելիքն ու կրթությունը և գովելի առաքինություն՝ այն մարդկանց, կյանքին ու առաջընթացին ծառայեցնելը: Մեր ժողովրդի դժվարին պատմության դարավոր փորձությունների մեջ գիրն ու դպրությունը եղել են նաև փրկության ուղի՝ հայ և քրիստոնյա մնալու, ապրելու և վերածնվելու: Այս տարի տոնախմբում ենք Հայոց Գրերի ստեղծման 1600-ամյա հոբելյանը, որի խորհրդով առանձնահատուկ պայծառ ու ոգեշունչ է նոր ուսումնաշրջանի բացումը: Սուրբ Սահակ և Սուրբ Մաշտոց մեր մեծ Ուսուցչապետերի գործին և անմահ ավանդին հավատարիմ՝ զորացյալ եղեք առ Աստված հավատով, սիրով՝ հանդեպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ու Հայրենիքը:

Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ Փրկիչ Տերը հոգու և մտքի առավել լույս, առավել կորով, եռանդ ու ջանասիրություն պարգևի ձեզ՝ ուսանելու և ուսուցանելու, փոխադարձ սիրով ու նվիրումով, արգասավորությամբ աշխատելու, որպեսզի նոր ուսումնական տարին մեծ հաջողություններ բերի բոլորիդ և նոր ուրախություններ:

Թող աստվածային ամենառատ սերն ու շնորհները մեր Տիրոջ՝ Հիսուսի Քրիստոսի միշտ ձեզ հետ լինեն ու բոլորի՝ ամեն:

Ս. Էջմիածին,
1 սեպտեմբերի 2005 թ.